ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանն ավարտած չորս ուսանողների սարկավագական ձեռնադրությունը՝ ձեռամբ պատարագիչ սրբազան հոր:

Ձեռնադրությունից հետո ոգեշունչ քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք առնիցեք աղօթս արարէք»: «Ես դնում եմ ձեռքս սրա (կոչեցյալի) վրա, և դուք բոլորդ աղոթեցեք» (Մաշտոց):

Այսօր դուք բոլորդ ականատես վկաներ եղաք սարկավագական ձեռնադրության սրարարողության: Չորս երիտասարդներ՝ երկուսը Ամերիկայի Միացյալ Նահանգներից և մյուս երկուսը Հայաստանից, հազիվ քսան տարիքը բոլորած, կոչման գիտակցությամբ եկան ծնրադրելու Ս. Էջմիածնի սրբալույս խորանի առաջ և ստացան «աստվածային և երկնավոր շնորհներ», կոչվելու համար ծառայության, իբրև համեստ սարկավագներ, Հայաստանյայց Եկեղեցու ծոցում ի Հայաստան և հայրուր:

Ձեռնադրության սուրբ խորհուրդը առաքելական դարերից մեզ ժառանգ հասած սրբազան մի կարգ է: Ձեռնադրության միջոցով ենթական եպիսկոպոսի ձեռքից, որ առաքելական շնորհի շղթայի հաջորդական մեկ օղակն է, ստանում է հոգևոր և իմացական ուժ և Սուրբ Հոգու շնորհները: Հայաստանյայց առաքելահաստատ մեր Եկեղեցում առաքելականության շարունակությունը Ս. Թադեոսից և Ս. Բարթողիմեոսից հասել է մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Գրիգոր Լուսավորչից էլ՝ մինչև մեր օրերը:

Սուրբ Գրիգոր Նարեկացին՝ հոգեզմայլ բանաստեղծը մեր Եկեղեցու, իր աղոթամատյանում Սուրբ Հոգուն դիմում է հետևյալ աղերսով. «Հերկի՛ր բանական անդաստանները իմ այս մարմնեղեն կարծրացած արտի, որ կարող լինի պտղաբերելու սերմդ հոգևոր (ԼԴ)»: Ուրեմն Ս. Հոգին մեր մեջ սերմանում է հոգևոր սերմեր հատկապես ձեռնադրության պահին, որպեսզի մեր կյանքում դրանք պտղաբերեն:

Նույն աղոթքի ավարտին մեծ Սուրբը հայցում է Սուրբ Հոգուց հետևյալը. «Ծնորհ

արա արդ և մեղավորիս, որ ես էլ խոսեմ համարձակությամբ. մեկնեմ կենսատու խորհուրդն ավետյաց ավետարանիդ՝ արագաթռիչ մտքի ընթացքով անցնելով անհուն ասպարեզները Քեզնով ներշնչված Կտակարանի»:

Այսօր ձեռնադրությա՛ն այս խորհրդավոր պահին, մենք ևս իբրև տրուպը «աստվածային և երկնավոր շնորհներ» փոխանցողների, աղոթքով ու աղերսով եղանք միջնորդ, որ Ս. Հոգին իր բազմապատիկ շնորհներով իջնի ի վերուստ և օժտի հոգևոր ճեմարանի շրջանավարտ այս չորս երիտասարդ սարկավագներին: Այս առթիվ խնդրեցինք, որ Ս. Հոգին շնորհի նրանց հաստարձակաձայն բարբառով քարոզելու կարողությունը, համբերը խոսեցնելու ուժը, լեզուներ խոսելու և աստվածային խորհուրդները մեկնաբանելու ընդունակությունը:

Այս պահին, սրտանց շնորհավորում ենք չորս կոչեցյալներին Հայ Եկեղեցու նվիրապետության առաջին աստիճանն ընդունելու առթիվ՝ մաղթելով նրանց նոր եռանդ ու կորով, հարատևության և հավատարմության ոգի, ծառայության և կոչումի գիտակցություն: Այս բոլորով սպառազինված՝ նրանք բոլորանվեր սրտով պիտի կարողանան օգտակար լինել մեր Եկեղեցուն, բարձր պահելով նրա սրբազան անունը ամենուր:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, դուք շատ լավ գիտեք, թե ներկա ժամանակներում Հայաստանյայց Եկեղեցին որքան կարիք ունի երիտասարդ, կրթված և գիտակից սպասավորների: Մեր Եկեղեցու համար կյանքի մի նոր շրջան սկսվեց, հոգևոր վերազարթնումի շնչով լի մի շրջան. վերջերս բազմաթիվ եկեղեցիներ վերաբացվեցին, աղոթքի մրմունջների հետ եկեղեցու զանգերի ղողանջը վերստին լցրեց մեր աշխարհը, դպրոցներում մեր մատաղ սերունդը իր ուսումնական առօրյան սկսեց «Հայր մեր»-ով և սուրբ մկրտության միջոցով մեր աշխարհում հավատացյալների նվազող թիվը սկսեց վերաճել, այսպիսով մենք բոլորս ականատես վկաները դարձանք, պատմության հոլովույթի միջոցով, մի նոր հրաշքի: Այդ հրաշքը անսպասելի վերադարձն է մարդկանց՝ դեպի հոգևոր արժեքները և դեպի Քրիստոս: Առանց գիտակից, զարգացած և նվիրված սպասավորների, բնական է, այս հրաշքը տեղի չէր ունենա, և որպեսզի այն իր վերջնական թափն ստանա, մենք այսօր ավելի քան երբեք պետք ունենք նոր սպասավորների:

Մեր պատմությունը վկայում է, որ առաքելական լույսը Ս. Գրիգոր Լուսավորչի հավատով էլ ավելի պայծառացած՝ դարերի դառն փորձությունների միջից անցնելով, առանց շիջանելու, ապահով հասել է մինչև մեր օրերը: Այսօր մեր պարտքն է տևապես անշեջ պահել այն և փոխանցել գալիք սերունդներին, լինելով նաև լույսի մատուվակներ մեր օրերում: Կա՞ արդյոք ավելի գեղեցիկ մի նպատակ, քան ծառայությունը լույսի, ճշմարտության, արդարության, սիրո և խաղաղության տարածման գործին:

Կրկին շնորհավորում եմ նորընծա մեր սարկավագներին, շնորհավորում եմ նաև նրանց ծնողներին և ընտանեկան պարագաներին: Այս առթիվ հատկապես շնորհավորում եմ նորընծա սարկավագների կնքահայր տեր և տիկին Տատուրյաններին, որոնք Միացյալ Նահանգներից հատուկ եկել էին ներկա լինելու համար այս ձեռնադրությանը:

Շնորհավորում եմ նաև ձեզ, սիրելի հավատացյալներ, որքան Հայաստանյա՛ց Եկեղեցին պայծառ լինի, որքան նա ուժեղ լինի և ամուր հաստատված հայոց հողի վրա և հայորդիների սրտի մեջ, այնքան մեր ժողովրդի ապագան պայծառ ու լուսավոր կլինի: Այս է վկայում Ս. Էջմիածնի և Հայ Եկեղեցու տասնյոթ երկար դարերի պատմությունը:

Թող Սուրբ Հոգու շնորհները, որ վստահ ենք, առատապես բաշխվեցին ձեռնադրության պահին, իջնեն նաև բոլորիս վրա, մեզ հույս ու հավատ ներշնչեն այս դժվարին օրերին, խաղաղություն պարգևեն ողջ աշխարհին և մխիթարություն՝ բոլոր սգավոր հոգիներին:

«Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս», ամեն:

* * *

Հրանտ սրկ. Բարսեղյան. ծնվել է 1965 թ. մարտի 11-ին Իրանի Փերիա գավառի Հազարջրիք գյուղում: 1968 թ. ընտանիքով հայրենադարձվել են Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Աշտարակ քաղաքում: 1972—82 թթ. սովորել և ավարտել է տեղի № 3 միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է հոգևոր ճեմարան: 1983—85 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում: 1987 թ. ծա-

ությունը է նշանակվել Օշականի Ս. Մաշտոց եկեղեցում:

* * *

Ալեքս սրկ. Գուզույան. ծնվել է 1964 թ. ապրիլի 7-ին ԱՄՆ-ի Նյու Ջերզի նահանգում: Նախնական կրթությունն ստացել է Բելմոնդ հայ աքուլ դպրոցում: 1982 թ. ավարտելով դպրոցը, ընդունվել է Բոստոնի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ և ավարտել 1986 թ.: Նույն թվականին ընդունվել է Բոստոնի համալսարանի ավելի բարձր իրավաբանական դպրոցը և մեկ տարի սովորելուց հետո, ժամանակավորապես թողել է ուսումը և մեկնել Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ շարունակելու ուսումը հոգևոր ճեմարանում:

* * *

Հակոբ սրկ. Հակոբյան. ծնվել է 1959 թ. Հայաստանի Մարտունու շրջանի Արծվանիստ գյուղում: 1965—75 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1979—81 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1983—84 թթ. ծառայել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցում: 1984 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան: 1989 թ. ծառայության է նշանակվել Սպիտակի Ս. Հարություն եկեղեցում:

* * *

Արեն-Սարգիս սրկ. Ճերեճյան. ծնվել է 1966 թ. ԱՄՆ-ի Դետրոյտ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Մասաչուսեթս նահանգի Սպրինգֆիլդ քաղաքում, ապա Ֆլորիդա նահանգի Ֆոր Լաթրդիլ քաղաքում: 1984—88 թթ. սովորել և ավարտել է Ֆլորիդայի Ս. Թոմաս համալսարանի կրոնական բաժինը: Սովորելու ընթացքում ծառայել է տեղի Ս. Դավիթ հայկական եկեղեցում: 1985—88 թթ. ամառային դասընթացների ժամանակ դասավանդել է Նյու Յորքի Ս. Ներսես ընծայարանում: 1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա սարկավագներին, մաղթելով նոր ձեռքբերումներ իրենց հետագա կրթական ասպարեզում և անմնացորդ ծառայություն Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին: